**Արձանագրություն N 5**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» հոկտեմբերի 2016թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-05» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ գնի նվազեցման շուրջ բանակցություններ վարելու մասին.**

«ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-05» ծածկագրով ընթացակարգի շրջանակում կազմակերպված բանակցություններին ոչ գնային պայմանները բավարարող գնահատված, նիստին ներկա մասնակցի՝ «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի կողմից առաջարկած գինն է.

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «Բևեռային ուղի» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|
| | | **Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/** | **ԱԱՀ** | **Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/** |
| **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 1 | **Քարթրիջների լիցքավորում՝ առանց տոների, ներառյալ պահեստամասերը** /ծառայության մատուցումը՝ Երևան քաղաքում/ | 1 550 000 | 310 000 | 1 860 000 |

**2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1-ին, 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Բեռային ուղի» ՍՊԸ-ին:

4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՅ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին:

5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Գրիգոր Այվազյանին:

2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Անուշ Պետրոսյանին:

1-ին, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**3. Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. հոկտեմբերի 13-ը ներառյալ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**4.** Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2016թ. հոկտեմբերի 17-ին, ժամը 10:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Մելքոնյան

Անդամներ՝ Կարեն Համբարձումյան

Սարգիս Արմենակյան

Արթուր Թամրազյան

Խորեն Պետրոսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան